

Հայ մշակույթի դեսպանը Եվրոպայում

2015 թ. հունիսի 10-ին, ժամը 14.00-ին Հայաստանի ազգային գրադարանի թամանյանական մասնաշենքի դահլիճում տեղի ունեցավ միջոցառում նվիրված չեխ հայագետ,թարգմանիչ Լյուդմիլա Մոտալովայի ծննդյան 80-ամյակին: Ներկաները դիտեցին կինոռեժիսոր Ջուլիետա Կաժոյանի Հայ մշակույթի դեսպանը Եվրոպայում խորագրով տեսաֆիլմը: Ելույթով հանդես եկան Պրահայի Կարլի անվան համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի հայագիտության բաժնի դասախոս Վադարշակ Շահինյանը: Նա գրադարանին նվիրեց Պրահայում 2002թ. հրատարակված իր հեղինակած չեխերեն-հայերեն գրուցարանը, որը նվիրել է անվանի հայագետ, հայ ժողովրդի չեխ դուստր, վաղամեռիկ պրոֆեսոր Լ. Մոտալովայի պայծառ հիշատակին: Միջոցառման ավարտին դիտեցին ցուցադրությունը նվիրված Լ. Մոտալովայի ծննդյան 80-ամյակին: